ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019



ԱՅԲ
կրթական
հիմնադրամ

Լավագույն կրթություն բոլորին.

սա մեր թիմի կարգախոսն է

Սեղմեք տեսանյութի համար

Մեր փոքրիկ թիմը մեծ ջանքեր է ներդրել 2019-ին, որ հնարավոր դարձնի ավելի քան 83 հազար աշակերտի մասնակցությունը «Այբ»-ի զանգվածային ու թիմային մրցույթներին, ապահովի «Այբ» ավագ դպրոցում սովորողների ավելի քան 79 տոկոսին կրթաթոշակով, հասանելի դարձնի անվճար որակյալ առցանց կրթությունը ամսական առնվազն 5000 ակտիվ օգտատերի համար, «Քան» ակադեմիայի աշխատարաններ կազմակերպի մի շարք մարզերի ու մայրաքաղաքի դպրոցներում, անցկացնի Արարատյան բակալավրիատի քննությունները, ուսուցիչներին ներգրավի նոր ծրագրերում:

Մեր ամենօրյա աշխատանքով ենք մենք կառուցում կրթությամբ ապագան փոխելու մեր տեսլականը:

Հինգ կարևոր փաստ

2019 թվականին՝

- ներդրվեց «Այբ»-ի կառավարման մասնակցային նոր մոդել.
- «Այբ»-ը Տավուշի մարզպետարանի հետ սկսեց նոր համագործակցություն.
- «Քան» ակադեմիան սոցիալական ծրագիր իրագործեց Տավուշի 19 սահմանամերձ համայնքներում.
- «Մեղու» մրցույթն իրականացվեց առաջին անգամ սփյուռքում.
- ստեղծվեց «Այբ»-ի առաջին բուհական մրցաշարը:

Տարին երեք րոպեում

ներկայացնում է «Այբ» կրթական հիմնադրամի տնօրեն Սոնա Կոշե

Սեղմեք տեսանյութի համար

ցյանը

«Այբ»-ը հաջողության ճանա

որը կրթության տիեզերքում ունի

Մեր բոլոր նախագծերում ամեն տարի ներգրավվում են Հայաստանի Հանրա
և շուրջ 125 000 ուսուցիչներ ու աշակերտներ: Մեր տեսլականը ազգային ու հ
միաժամանակ միջազգային նորարար տեխնոլոգիաների կիրառմամբ կրթու
Մենք ինքներս մեզ դիտարկում ենք որպես կրթական լաբորատորիա, որում հ
դարձնում ենք հանրության սեփականությունը:

պարի է,

h կոնկրետ հասցեներ

պետության ու Արցախի շուրջ 1100 դպրոցներ
հոգևոր արժեհամակարգի վրա հիմնված,
թյունն է, որը բյուրեղացել է մեր նախագծերում:
հաջողությամբ քննություն բռնած նախագծերը

Կրթության վերափոխում

Միջազգային ճանաչում

աջնորդություն

Նոր ծրագրեր

ավագույն կրթություն

Նորարարություն

Կառավարման *նոր մշակույթ «Այբ»-ում*

«Այբ» կրթական հիմնադրամը 2019 թ. դեկտեմբերի 12-ից ունի հոգաբարձուների նոր խորհուրդ, որը կգործի 2 տարի: Դեկտեմբերի 1-ից նույն մոդելով ձևավորվել է նաև «Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհուրդը, որի կազմում առաջին անգամ ներկայացված են նաև դպրոցի շրջանավարտների և ուսուցչական համայնքները:

«Այբ»-ի կառավարման և գործունեության համակարգային բարեփոխումների շրջանակում խորհրդի կազմն ընտրվել է նոր կանոնակարգերով ու ընթացակարգերով՝ հիմնված մասնակցային ու բաց մոդելի վրա և ներհամայնքային քվեարկության արդյունքում:

Խորհրդի կազմը

Արամ Փախչանյան, նախագահ
«Այբ» դպրոցի տնօրեն, ABBYY ընկերության փոխնախագահ, «Այբ» կրթական հիմնադրամի համահիմնադիր, Հայաստան

Աշոտ Մկրտչյան
«Վիզա Կոնկորդ Գրուպի» նախագահ, Հայաստան, ՌԴ

Արտակ Հովհաննիսյան
EPAM ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ, ՌԴ

Լևոն Ղազարյան
անհատ ներդրող, ԱՄՆ

Դավիթ Յան (ներկայացուցիչ՝ Գագիկ Գրիգորյան)
ABBYY, iiko, Platius ընկերությունների հիմնադիր, «Այբ» կրթական հիմնադրամի համահիմնադիր, ԱՄՆ

Սամվել Դովլաթյան
«Մելինեթ» ՍՊԸ-ի հիմնադիր, Հայաստան

Կարեն Մուսաելյան
HiQu Capital ընկերության հիմնադիր, «Այբ» կրթական հիմնադրամի համահիմնադիր, ԱՄՆ

2019 թ. *ֆինանսական հաշվետվություն*

Դրամի հոսք	Մուտք	Ելք
Ընդհանուր և վարչական աշխատանքներ	**83.292.792**	**103.483.195**
«Այբ» կրթական հանգույց	**91.666.392**	**183.872.429**
Ընդհանուր «Այբ կրթական հանգույց» ծրագիր, ներառյալ Ա և Բ մ/շ	105.310	3.412.475
Եկեղեցու ծրագիր		27.310.835
Գ մասնաշենք	14.399.994	64.493.080
ԱԿՀ աշակերտների կրթաթոշակներ	77.161.088	88.656.040
Մրցույթներ	**87.961.387**	**111.498.613**
«Կենգուրու» մաթեմատիկական մրցույթ	38.636.770	41.667.554
«Ռուսական արջուկ» մրցույթ	8.193.920	14.856.550
Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշար	1.749.000	8.341.313
«Մեղու» մրցույթ	34.912.640	36.854.055
Ռոբոտների օլիմպիադա	4.469.057	9.779.143
Կրթաթոշակներ աշխարհի լավագույն համալսարանների ուսանողներին	**87.555.400**	**96.735.273**
Կրթաթոշակներ աշխարհի լավագույն համալսարանների ուսանողներին	87.555.400	96.735.273
Էլեկտրոնային ռեսուրսների թարգմանության և ստեղծման նախագիծ	**23.745.400**	**29.082.194**
Էլեկտրոնային ռեսուրսների թարգմանության և ստեղծման նախագիծ	18.173.900	21.018.354
Ծրագրավորում ավագ դպրոցի աշակերտների և ուսուցիչների համար		2.694.357
Առցանց կրթական հարթակի տեղայնացման կամ զարգացման ծրագիր	5.571.500	5.369.483
Այլ ծրագրեր	**132.819.300**	**132.245.116**
Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի ծրագիր (FAST)	87.575.760	91.945.730
ԱԲ-ի քննություններ	45.243.540	40.299.386
Ընդամենը	**507.040.671**	**656.916.821**

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի իրականացրած անկախ աուդիտի արդյունքում 2019 թ. մեր ֆինանսական ամփոփ հաշվետվությունները կրկին ստացել են դրական եզրակացություն, որին կարող եք ծանոթանալ այստեղ:

Նվիրել հանուն կրթության

Ֆոնդահայթայթման մեր ջանքերն ու գործիքները հնարավոր են դարձնում մեր կրթական գաղափարների իրականացումը և մարդասիրության ու բարեգործության մշակույթի ամրապնդումը մեր երկրում:

2019-ի *մեր հիմնական ուղղությունները*

«Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդի համալրում

Մենք ներգրավում ենք միջոցներ՝ անհատ բարերարների ու կազմակերպությունների նվիրատվություններից, որպեսզի որևէ աշակերտ, որն ընդունվել է «Այբ» ավագ դպրոց, չզրկվի այստեղ սովորելու բացառիկ հնարավորությունից: Ապահովել ենք ՀՀ-ից, Արցախից ու սփյուռքից «Այբ» ավագ դպրոցում սովորողների ավելի քան 79 տոկոսին՝ *147 աշակերտի*, մասնակի կամ ամբողջական կրթաթոշակով:

ԿՐԹԱԹՈՇԱԿ Է ՏՐՎԵԼ

- **27** աշակերտի — ամբողջ չափով
- **21** աշակերտի — 96%-ի չափով
- **63** աշակերտի — 82%-ի չափով
- **29** աշակերտի — 33%-ի չափով

Էմմա Հովսեփյան

««Այբ»-ը ցկյանս ուսումնառություն է տրամադրում՝ գիտելիքից, մտածողությունից, վերլուծությունից մինչև իրական կյանք: «Այբ» ավագ դպրոցը փոխեց իմ մտածելակերպը: Դպրոցը կրթում և զինում է մեզ գիտելիքով և ճանապարհ հարթում դեպի պայծառ ապագա: «Այբ» դպրոցում սովորելը լի է բացահայտումներով, բայց և դժվար է: Մեզանից չեն պահանջում փաստեր մտապահել, փոխարենը սովորում ենք վերլուծել դրանք, ինքնուրույն մտածել և եզրակացություններ անել: Կրթությունս «Այբ»-ում կարևոր է ինձ համար, ինչպես նաև այստեղ կիրառվող մեթոդները, որոնք զինում են մեզ խոր գիտելիքներով և տարբեր հմտություններով»:

«Քան» ակադեմիայի հարթակի տեղայնացման համար ֆինանսավորում

«Քան» ակադեմիան առցանց ու անվճար կրթության լավագույն հարթակներից է ողջ աշխարհում: Այն հնարավորություն է տալիս կազմելու ուսման անհատական օրակարգ, սովորելու տեսանյութերի օգնությամբ, գնահատելու առաջադիմությունը, ամրապնդելու կապը հասակակիցների և ուսուցիչների հետ:

Հայաստանում «ԱյբԼաբ»-երի տարածման համար ֆինանսական միջոցներ

Նպատակ ունենալով ՀՀ բոլոր մարզերի և Արցախի մեր երեխաների մեջ ի սկզբանե սերմանել բնագիտական առարկաների հանդեպ հետաքրքրություն ու սեր՝ «Այբ» կրթական հիմնադրամը ցանկանում է ստեղծել գերժամանակակից սարքավորումներով զինված **«ԱյբԼաբ»-եր** ու տարածել ամբողջ Հայաստանում:

Ֆոնդահայթայթման
մեր գործիքները

«Բարի ընթրիք» նախագիծ՝

արվեստի, գիտության, երաժշտության, բիզնեսի մարդկանց ներգրավմամբ: Մեր 58 հաղթող մասնակիցները կրթության նվիրյալ մարդիկ են: Այս հանդիպումների արդյունքում «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդը համալրվել է 11 204 915 ՀՀ դրամի չափով:

Donate.ayb.am. հեշտ և արագ միջոց՝ նվիրելու ապագա

«Այբ» կրթական հիմնադրամը գործարկեց այդքան սպասված donate.ayb.am հարթակը, որտեղ ցանկացած մարդ, առանց լրացուցիչ ջանքերի ու ժամանակ կորցնելու, կարող է նվիրատվություն կատարել հանուն որակյալ կրթության և ապագայի:

Donate.ayb.am

«Հաջողության բանաձև». պատմություններ, խորհուրդներ և ոգեշնչումներ

«Հաջողության բանաձևը» (Formula for Success) հիմնադրամի նախագծերից մեկն է, որը վարպետության բաց դասերի հարթակ է: 2019 թ.-ին Skill ընկերության հետ համատեղ իրականացրել ենք 3 միջոցառում, որոնց մասնակից ավելի քան 1000 մարդ լսել է 6 հետաքրքիր խոսնակի հաջողության բանաձևերը: «Women Power» խորագրով միջոցառմանն ու բարեգործական հյուրասիրությանը հանգանակված գումարն ուղղվել է «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդին:

Բարի գործեր *աշխարհի հետ*

Մեր միասնական թիմն իրականացնում է բազմաթիվ բարի գործեր և ժպիտ պարգևում մարդկանց:

Good Deeds Day կամ Բարի գործերի օր

2019 թ.-ին «Այբ» կրթական հիմնադրամի թիմն առաջին անգամ միացավ Բարի գործերի օրվան և այդ շրջանակում այցելեց Նորքի տուն-ինտերնատ՝ տարեց բնակիչներին ջերմություն և սեր նվիրելու:

Միջազգային այս շարժմանը մասնակցել է 3,9 միլիոն մարդ 108 երկրից: «Այբ» կրթական հիմնադրամը ստացավ «Երախտագիտության վկայական» Բարի գործերի օրվա միջազգային կազմակերպիչների կողմից: Վստահ ենք՝ սա վարակիչ և շարունակական կլինի:

Բարի երեքշաբթի կամ Giving Tuesday

«Այբ» կրթական հիմնադրամն արդեն 3-րդ տարին է՝ միանում է համաշխարհային #GivingTuesday շարժմանը՝ մարդկանց համախմբելով «Այբ»-ի գլխավոր նպատակի՝ ՀՀ բոլոր մարզերի, Արցախի և սփյուռքի երեխաներին լավագույն կրթություն տալու շուրջ:

#GivingTuesday-ը պաշտոնապես անցկացվում է ավելի քան 30 երկրում: Վերջին երկու տարվա ընթացքում Giving Tuesday-ն անընդմեջ սահմանել է ռեկորդ. 24 ժամվա ընթացքում ամբողջ աշխարհում բարեգործության համար նվիրաբերվել է 35 միլիոն ֆունտ ստեռլինգ:

Կրթաթոշակային
ծրագիր

*(2018-2019 ուս. տարում
93 մլն դրամ)*

88,6
մլն դրամ

FAST

91,9
մլն դրամ

«Այբ»-ի՝ աշխարհի
լավագույն բուհերում
սովորող շրջանավարտների
կրթություն

96,7
մլն դրամ

Նախա
ուղղվել
550 մ

գծերին
է շուրջ

մլն դրամ

29,1
մլն դրամ

«Քան» ակադեմիայի
հայաստանյան
գրասենյակ

111,5
մլն դրամ

Դպրոցական
մրցույթներ

40,2
մլն դրամ

Արարատյան
բակալավրիատի
քննական կենտրոն

Մեր այբական ջերմ օր

«Այբ»-ը միասնական գաղափարախոսությամբ համայնքային բացառիկ կառույց է: Այստեղ հավաքվել են կրթության դերը կարևորող, կրթությամբ հաջողությունների հասած և կրթության միջոցով աշխարհը փոխելու պատրաստ մարդիկ:



Սեղմեք տեսանյութի համար

երը՝ ֆոտոշարքով

Մեր կողքին են ավելի քան

250 *բարերարներ*

աշխարհի տարբեր անկյուններից:
Նրանք մարդիկ են, ովքեր ապագա են
նվիրում մեր երեխաներին ու երկրին:

«Քան» ակադեմիա

Առցանց կրթությունը և ինքնակրթությունն այսօր դարձել են արագ փոփոխվող կրթական աշխարհի ամենակարևոր և հեռանկարային ուղղություններից մեկը թե երեխաների, թե ուսուցիչների և թե պարզապես սովորելու ցանկություն ունեցող մարդկանց համար: «Քան» ակադեմիայի հայաստանյան թիմի առաքելությունը կրթական մակարդակը Հայաստանում նոր տեխնոլոգիաների միջոցով բարելավելն է և անվճար հայերեն որակյալ կրթական բովանդակություն հասանելի դարձնելը բոլորի համար՝ անկախ նրանց գտնվելու վայրից և կարողություններից:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՆԵՐ ՉՈՒՆԻ

https://hy.khanacademy.org/

ՀԱՍԱՆԵԼԻ ԱՄԵՆՔԻՆ ԵՎ ԱՄԵՆՈՒՐ

Khan Academy Armenia

«Քան» ակադեմիայի տարին լի էր սոցիալական նախաձեռնություններով և մարզային այցերով

2019-ին՝

- ավարտել ենք «Վերածնունդ» հիմնադրամի հետ մաթեմատիկայի տեղայնացման երկամյա ծրագիրը և World Vision-ի ու Եվրամիության հետ՝ «Քան» ակադեմիայի հայալեզու բաժիններն ընդլայնելու ծրագիրը՝ հասանելի դարձնելով նյութեր արվեստի պատմության, երաժշտության, անգլերենի, ձեռնարկատիրության բաժիններից.
- «Քան» ակադեմիան սոցիալական մեծ ծրագրով այցելել է Տավուշի սահմանամերձ 19 համայնքներ, իրականացրել մաթեմատիկայի *21 աշխատարան՝ 360 աշակերտի և 25 ուսուցչի* համար, որից հետո գրանցված աշակերտների 53%-ն ինքնուրույն օգտագործում է կայքը.
- մաթեմատիկայի նյութերն ըստ դասարանների համապատասխանեցրել ենք պետական չափորոշիչներին.

Սահմանամերձ բնակավայրերում սովորում են «Քան»-ի հետ

Երևանում, Վանաձորում, Գյումրիում «Քան» ակադեմիայի նախաձեռնությամբ անցկացվել են հանրային միջոցառումներ ու հանդիպումներ ավելի քան *50 դպրոցներում.*

«Քան» ակադեմիայի հետևորդների համար թողարկել ենք հեռախոսային հավելված՝ սովորելը դարձնելով է՛լ ավելի հեշտ ու առանց համացանցի անհրաժեշտության.

«Քան» ակադեմիայի անվճար հայալեզու տեսանյութերն ու վարժությունները հասցրել ենք *15 000*-ի, ամսական ակտիվ օգտատերի թիվը՝ *5000*-ի:

Հեռավար կրթության պայմաններում կայքի օգտատերերի թիվը 2020 թ. կտրուկ մեծացել է

1 միլիոն դիտում

28.000 օգտատեր

4800 ուսուցիչ

ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

Արդարությունն ու գիտելիքն են որոշում հաղթանակը

Այբական դպրոցական մրցույթները յուրահատուկ կրթական շարժում են դարձել՝ միավորելով ՀՀ, Արցախի և արդեն սփյուռքի տասնյակ հազարավոր դպրոցականների: Այս մրցույթները դարձել են արդարության, նորարարության և գիտելիքի չափանիշ՝ ամեն տարի նոր հնարավորություններ ստեղծելով մեր սովորողների համար:

Մեղու

Ռուսական արջուկ

Կենգուրու

ՀՀ-ից և Արցախից
83.000
մասնակից

շուրջ
1040
դպրոց

61
թիմ

ՊԱՏԱՆԻ ՔԻՄԻԿՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ

WRO

	Ռուսական արջուկ	Մեղու	Կենգուրու
Մասնակից դպրոցներ	320	979	1037
Մասնակից աշակերտներ	8182	35227	38616
Մրցանակակիրներ	378	1140	474
Լավագույն արդյունք արձանագրած աշակերտներ	74	244	653
Հաղթողներ	2	7	3

«Կենգուրու», «Մեղու», «Ռուսական արջուկ» մրցույթներին ամեն տարի անհամբեր սպասում են ՀՀ և Արցախի գրեթե բոլոր դպրոցներում:

«Մեղու» մրցույթի մասնակցության հայտն ուղարկելու պահին Լոռու մարզի Խնկոյանի հիմնական դպրոցն ուներ 5 աշակերտ, որոնք բոլորն էլ ցանկացել էին մասնակցել մրցույթին:

«Մեղուն» Խնկոյանի հինգ աշակերտի համար իսկական տոն դարձավ՝ գիտելիքի, մտածելու և նորը տեսնելու:

Մրցույթների հաղթողները և լավագույն արդյունք ցուցաբերած մասնակիցները ավանդույթի համաձայն հյուրընկալվեցին նաև երկրի ղեկավարության կողմից:

Դե իսկ նվերները բոլորի և հատկապես հաղթողների համար միշտ յուրահատուկ են:

«Այբ»-ի նվիրված ու արհեստավարժ աշխատանքի արդյունք է նաև այն, որ *«Կենգուրու առանց սահմանների»* միջազգային ընկերակցությունը որոշեց իր տարեկան գագաթնաժողովը **2023 թվականին անցկացնել Հայաստանում:**

«Մեղու» հայերենի մրցույթն առաջին անգամ անցկացվեց նաև սփյուռքում նպատակ ունենալով նպաստելու հայապահպանությանը և հայոց լեզվի տարածմանը: 485 մասնակից Ռուսաստանից, Վրաստանից, Իրանից և ԱՄՆ-ից. «Մեղուն» արդեն սփյուռքում է թռչում:

Մեր թիմային մրցույթները

շարունակում են նոր մասնակիցներ և դպրոցներ ընդգրկել

ՊԱՏԱՆԻ ՔԻՄԻԿՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ

10 տարի

2019 թ.

Քիմիկոսների ուսանողական մրցաշար

մեր 1-ին ուսանողական մրցաշարը

2020 թ.

10 տարի և քիմիական մեծ համայնք՝ դպրոցներ, ուսուցիչներ, աշակերտներ, պարզապես քիմիա սիրող մարդիկ

Սեղմեք տեսանյութի համար

WRO

Իսկ Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլը իսկական ռոբոտաշինական մարտ է հիշեցնում. նորագույն տեխնոլոգիաներ, թվեր, ռոբոտներ, մտածող ուղեղներ և տարբեր գույների մալուխներ: Ամեն ինչ մեկ վայրում 21-րդ դարին համահունչ:

Հայ երեխաները նաև մասնակցել են մեր թիմային մրցույթների միջազգային փուլերին Ուկրաինայում և Հունգարիայում

Շարունակելով կրթության բովանդակությունն ու որակը վերափոխելու մեր գաղափարախոսությունը

Արարատյան *բակալավրիատ*

2019-ին աճեց *Արարատյան բակալավրիատի* հավաստագիրը ճանաչող համալսարանների թիվը՝ հասնելով

75-ի

Ապահովեցինք Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի աշխատանքը. այս քննության արդյունքները համազոր են Քեմբրիջի համալսարանի *«Քեմբրիջի միջազգային քննություններ»* կենտրոնի խորացված Ա մակարդակի քննությունների արդյունքներին:

- ԱՄՆ
- Էստոնիա
- Ավստրիա
- Ճապոնիա
- Միացյալ Թագավորություն
- Կանադա
- Նիդեռլանդներ
- Հոնկոնգ
- Շվեյցարիա
- Ֆրանսիա
- Բելգիա
- Գերմանիա

«Այբ» դպրոցի շրջանավարտ Տաթևիկ Մարտիրոսյանն «Այբ» համայնքի աջակցությամբ սովորում է Նիդեռլանդների Վիլեմ դը Կոոնինգի ակադեմիայում:
«Սովորում եմ պատկերազարդում: Դա մի մեծ աշխարհ է, որը ստեղծագործելու, երևակայելու և այդ ամենն իրականացնելու անսպառ հնարավորություններ է ընձեռում: «Այբ»-ն այս ամեն ինչի «պատճառն» է. երևի հենց «Այբ»-ի միջավայրի շնորհիվ որոշեցի արվեստի ուղղությամբ շարունակել: «Այբ»-ը ոչ միայն ակադեմիական գիտություններ է փոխանցել ինձ քիմիայի, ֆիզիկայի և հայոց լեզվի մասին, այլ նաև կյանքի հմտություններ կյանքի մասին»:

*Շուրջ **97** մլն դրամ հատկացրինք «Այբ» դպրոցի՝ աշխարհի լավագույն բուհերում սովորող շրջանավարտների կրթությանը:*

Տավուշի մարզի ղեկավարի հետ ստորագրեցինք համագործակցության հուշագիր՝ ամրագրելով «Այբ»-ի հաջողված կրթական ծրագրերը մարզում հասանելի դարձնելու և որակյալ կրթական մշակույթ ու միջավայր ստեղծելու մեր համատեղ ձգտումն ու նպատակը:

Այբ դպրոց

Համայնքային դպրոց՝ միջազգային լավագույն փորձով

«Այբ» դպրոցը շարունակում է լինել կրթական օրինակելի միջավայր, որում երեխաները ստանում են ողջ աշխարհում մրցունակ կրթություն՝ միջազգային հարուստ փորձի ու հայկական լավագույն կրթական ավանդույթների հիման վրա:

մայիս 2019 թ.
41
շրջանավարտ

2019 թ. մայիսի դրությամբ՝
300
շրջանավարտ

2019-2020 թթ.
472
աշակերտ

193
ավագ դպրոց

79%
կրթաթոշակ

Այս տարի առաջին անգամ մենտորության ծրագրում որպես մենտոր ընդգրկվեցին հենց «Այբ» դպրոցի շրջանավարտների առաջին սերնդի ներկայացուցիչներ:

2019-ը «Այբ» դպրոցում

Ձևավորվեց «Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի նոր կազմը: Առաջին անգամ կազմում ներկայացված են նաև դպրոցի շրջանավարտների և ուսուցչական համայնքները՝ մեկական պատվիրակով:

«Այբ» ավագ դպրոցի 3 աշակերտ արժանացավ SS ոլորտի լավագույն աշակերտի պետական մրցանակի:

«Այբ» դպրոցի գործադիր տնօրեն և «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արամ Փախչանյանը դարձավ «Rybakov Prize 2020»-ի դափնեկիր:

«Այբ» դպրոցի 7 աշակերտ ստացավ 1-ին կարգի դիպլոմ առարկայական օլիմպիադաների՝ Երևանի մարզային փուլում: Եվս 7 այբեցի արժանացել է 2-րդ կարգի դիպլոմի, 6 աշակերտ էլ՝ 3-րդ կարգի:

Նախագծային ուսումնառության «Կանաչ քիմիա» ակումբի աշակերտների՝ բնության մեջ կենսաքայքայվող պոլիմերների ստեղծման գյուտը ստացավ արտոնագիր Մտավոր սեփականության գործակալության կողմից:

Սեղմեք տեսանյութի համար

Այբական *իյուրեր*

Միխայիլ Միշուստինը (այդ պահին ՌԴ դաշնային հարկային ծառայության ղեկավար, այսօր արդեն՝ ՌԴ վարչապետ) Արթուր Ջանիբեկյանի հետ «Այբ»-ում

Մեսրոպ քհն. Արամյան

«Այբ»-ի համահիմնադիր

Դավիթ Յան

«Այբ»-ի համահիմնադիր

Ռայան Քոֆի

Կոնեկտիկուտի համալսարանի պրոֆեսոր, ֆիզիկոս

Լևոն Օգանեզով

երաժիշտ

Կարին Մարկիդես

ՀԱՀ նախագահ

Միեր Մկրտչյան

ռեժիսոր

Արամ Պաչյան

գրող

Հրանտ Թոխատյան

դերասան

Տնօրեն և ուսուցիչներ

Լոբաչևսկու անվան լիցեյ

Միջոցառումներ «Այբ» դպրոցում

Եվրոպական երիտասարդական պառլամենտի 89-րդ միջազգային գագաթնաժողով

«Ռուսալ» գիտության փառատոնի բացում

Digital UAV Forum 2019-ի դպրոցական մաս

Ծրագրավորման ժամ (Hour of Code)

Ուսումնական այցեր

«Այբ» դպրոցի պատվիրակությունը հյուրընկալվեց Ղազախստանի Նազարբաևի ինտելեկտուալ՝ քիմիակենսաբանական թեքումով դպրոցում:

Երևանդ Քոչարի թանգարանում բացվեց «Այբ»-ի աշակերտների ցուցահանդեսը:

«Այբ» դպրոցն ու «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) ՍՄԱՐԹ կենտրոնում համատեղ անցկացրին նորարարական կրթական միջոցառում:

«Այբ» դպրոցի աշակերտները ուսումնական այցերով եղան Մեծ Բրիտանիայում: «Կանաչ քիմիա»-ի աշակերտները հաղթեցին Գյոթեի ինստիտուտի «Դպրոցը հանուն շրջակա միջավայրի» մրցույթում և մեկնեցին Գերմանիա, որտեղ ներկայացրին բիոպլաստիկը:

Դպրոցի համայնքի գծով տնօրեն Աննա Ակոպյանն ու մասնագիտական կողմնորոշման մասնագետ Ռուզաննա Մայիլյանը Իսպանիայի Բիլբաո քաղաքում մասնակցեցին Միջազգային դպրոցների խորհրդի (CIS) ամենամյա համաժողովին:

«Այբ» դպրոցի տնօրեններ Արամ Փախչանյանը, Դավիթ Սահակյանը և Մերի Հովսեփյանը մասնակցեցին Արցախի «Կրթական ֆորում 2019-ին»:

«Այբ» դպրոցի

մասնակցությամբ միջոցառումներ

WCIT 2019 ԿԳՄՄՆ միասնական «Հայաստան» տաղավարում

«Ավրորա» ֆորումի Ararat Challenge փառատոն

Գոհաբանության օր

Այբական խաղեր 2019

Ամանորյա տոնավաճառ

«Ռոլան» մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոն

Տաղանդների շոու 2019

Նախագծային ուսումնառություն

Տեղի ունեցան «Այբ» դպրոցի նախագծային ուսումնառության ակումբների նախագծերի շնորհանդեսներ

Film Factory՝ «Թաքնված գանձերի հետքերով» ֆիլմաշար

«Արվեստանոց»՝ «Տեսողական պոեզիա» գիրք

F8՝ «Ուրվական թատրոն» ցուցահանդես

Դիլիջանի
կենտրոնական
դպրոց

Քաղաքային դպրոցի այբական մոդել

ՀՀ Կենտրոնական բանկի հետ համագործակցությամբ Դիլիջան քաղաքում գործում է Դիլիջանի կենտրոնական դպրոցը, որը պատկանում է «Այբ» դպրոցների ընտանիքին և «Այբ»-ի՝ արտաքին պատվերով ու ֆինանսավորմամբ իրականացված առաջին դպրոցական նախագիծն է՝ հասանելի ոչ միայն ՀՀ ԿԲ-ի աշխատակիցների, այլև Դիլիջանում բնակվող այլ ընտանիքների երեխաների համար:

4
այլ քաղաքներից

89
Դիլիջան քաղաքից

42
Կենտրոնական բանկի աշխատակիցների երեխաներ

Ուսուցիչների
15%
այլ բնակավայրերից բնակության է տեղափոխվել Դիլիջան՝ դպրոցում դասավանդելու նպատակով

2019 -Ը ԴԿԴ-ՈՒՄ

Աշակերտները մասնակցեցին մաթեմատիկայի և քիմիայի օլիմպիադաների հանրապետական փուլերին:

ԱՄՆ Խաղաղության կորպուսի «Write On» մրցույթի ազգային փուլում դպրոցի երեք աշակերտ նվաճեց երեք մրցանակային տեղ, իսկ միջազգային փուլում Անժելա Մաթևոսյանը նվաճեց 1-ին տեղը:

Շախմատի մարզային փուլում ԴԿԴ-ն զբաղեցրեց երկրորդ հորիզոնականը:

Պոեզիայի և ասմունքի անգլերեն մրցույթի մարզային փուլում 5 աշակերտ գրավեց առաջին և երկրորդ մրցանակային տեղերը:

Լողի միջքաղաքային մրցույթում չորս աշակերտ զբաղեցրեց 1-ին և 3-րդ հորիզոնականները:

Technovation Armenia 2019 մրցույթում 8-րդ դասարանի հինգ աշակերտներ «Լավագույն կրթական ծրագիր» անվանակարգում արժանացան մրցանակի:

«Կենգուրու 2019» մրցույթում «Լավագույն արդյունք» անվանակարգում մրցանակակիր դարձավ 9 աշակերտ, «Մեղու 2019»-ում 4 աշակերտ:

Դպրոցականների շախմատի օլիմպիադայի քաղաքային փուլում ԴԿԴ-ն զբաղեցրեց առաջին հորիզոնականը:

Դպրոց-սովորող-ընտանիք համագործակցության շրջանակում իրականացվեցին համատեղ միջոցառումներ («Հեքիաթանի», «Մի անվան պատմություն», համատեղ սպորտլանդիա) և ծնողական շաբաթ:

Տարվա *միջոցառումներ*

Շախմատի աշխարհում

Դպրոցի աշակերտների երեք հաշվետու համերգ

Հոգևոր երաժշտության համերգ. առաջին անգամ հանդես եկավ դպրոցի նորաստեղծ երգչախումբը

Թումանյանական միջոցառումներ

Մեր *հյուրերը*

Կազանի դաշնային համալսարանին կից Ն. Լոբաչևսկու անվան վարժարանի պատվիրակություն



Վանաձորի թիվ 6,13,17,19 դպրոցներ, Կիրանց, Ներքին Ծաղկավան և Սևքար գյուղերի դպրոցներ

Ալավերդու թիվ 10 դպրոց

Վարդենիկի կրթահամալիր

Տավուշի մարզպետարանից Մերուժան Հարությունյան և «Էրնսթ Ընդ Յանգ» ընկերության Նյու Յորքի գրասենյակի SS ոլորտի գործընկեր Էմմա Առաքելյան

Նախագծային *ուսումնառություն*

2019-ին դպրոցի 7-րդ և 8-րդ դասարանցիները հանդես եկան երկու ուսումնական նախագծով՝ «Անտառ» և «Բացահայտվող աշխարհ»:

Համայնքային միջոցառումներ

Գիտելիքի և արվեստի ամանորյա ցուցահանդես-վաճառք

Դիլիջան համայնքի դպրոցների և համայնքային կենտրոնների հետ նշեցինք Սուրբ Ձատիկը

Նախաձեռնեցինք թումանյանական համայնքային փառատոն, որին մասնակցեցին Դիլիջանի 7 դպրոցներ

Հեղինակային մրցույթներ

Ա. Հովհաննիսյանի անվ. Ծրագրավորման մրցույթ

Շավարշ Կարապետյանի անվան լողի մրցույթ

Միասին մենք կարող ենք փոխել կրթության աշխարհը

Ուրախ ենք, որ կրթության մեր ճանապարհին ու գաղափարները կիսում են համախոհ մարդիկ և սոցիալական բարձր պատասխանատվություն ունեցող ընկերություններ:

Շնորհակալ ենք մեզ վստահող երկարամյա գործընկերներին և այն նոր կառույցներին, որոնք որոշեցին մեզ հետ միասին բարեփոխել կրթության ոլորտը մեր երկրում: Լիահույս ենք, որ միասին ավելացնելու ենք կրթական ծրագրերի շահառուների շրջանակը:

Մեր գործընկերները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Տավուշի մարզպետարան

ԵՐԵՎԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Cambridge Assessment International Education

AGBU ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

GITELIQ CREATIVE FORUM

UCL Institute of Education

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ ENTERPRISE INCUBATOR FOUNDATION

media max

LOFT

AUA American University of Armenia

Հաջողության բանաձև

skill

Բարի ընթրիք

Ankyun TALIAN HOME RESTAURANT

Գարուն by արարատ սնունդ

DOLMAMA

Sinatra RESTAURANT

MBG MARGARYAN BUSINESS GROUP

Louis Charden, Hans&Franz, Alaska by Hans&Franz, Chinar, Vostan by Tsirani ,Tsirani Home, Tsirani Garden, White Hall by Tsirani

gourroo club & garden

«Քան» ակադեմիայի *հայաստանյան գրասենյակ*

Khan Academy

World Vision ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԻՆՏԵԼԵԿՏԻ

ԿՏԱԿ

Դպրոցական *զանգվածային մրցույթներ*

Kangourou Sans Frontières

Русский медвежонок – Языкознание для всех

VTB

TRANSIMPEX

Luys Lnyu

Հ.Օ.Ս. 1910

Союз армян России – Общероссийская общественная организация

Foreign Language Academies of Glendale FLAG – Armenian • French • German • Italian • Japanese • Korean • Spanish

Glendale Unified School District

Հայոց սեռոց սուրբ էջմիածնի եվ ՀՀԿՀ հայորդեաց տների

Թավրիզի հայոց ազգային «Թամարյան-Սահակյան» դպրոց

Ռուսաստանի հայերի միության Կրասնոդարի երկրամասի կրթության բաժին

Թիմային *մրցույթներ*

WRO – World Robot Olympiad

YMMP

Rostelecom

ConverseBank

AZAD

PROFHOLOD

Շնորհակալ ենք այն բոլոր դպրոցներին, կրթական կենտրոններին ու մարզպետարաններին, որոնք հյուրընկալեցին այբական մրցույթները:

Հինգ կարևոր նպատակ 2020 թվականին

Մշակում ենք ապագայի դպրոցի մոդելը:

Ստեղծում ենք դպրոցական առցանց մրցույթների նոր համակարգ:

«Քան» ակադեմիայի միջոցով ընդլայնում ենք հեռավար կրթության մեր հարթակը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի և UNDP-ի հետ իրականացնում ենք գաղափարների «Սերունդ առանց սահմանների» մրցույթը:

Վերապատրաստում ենք բնագիտական լաբորատորիաների ուսուցիչներին:



ԱՅԲ

կրթական
հիմնադրամ

Մեր նախաձեռնությունները շատ են ու բազմակողմ: Հետևեք մեզ և գտեք կրթական նոր միջավայրի մեր նորարար մոտեցումները www.ayb.am և www.facebook.com/AybFoundation/ հարթակներում:

Ազատության պողոտա 1/21-1, Երևան 0037, + 374 77 010 863